«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ԲԱՆԱԽՈՍ

ԹԻՎ 14

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՓԵՏՐՎԱՐԻ 19, 1998Թ



## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ ԱՅՍՕՐ

**Միշել Լըգրա,**
*Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան*

Դուք իրավացիորեն կարող եք հարցնել, թե ինչու եմ այս թեման ընտրել այսօրվա ելույթիս համար: Սրանով ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն ընդհանուր խնդիրների վրա, որոնք այսօր ծառացել են Ֆրանսիայի և Հայաստանի առջև:

Չորս հարց եմ առանձնացրել: Առաջին կետը, որն ինձ կարևոր է թվում՝ խոր տնտեսական փոփոխություններ ապրող տնտեսական միջավայրին համապատասխանելն է: Երկրորդ կետը՝ ինքնատիպ մշակութային ինքնության պահպանման խնդիրը: Երրորդ կետը վերաբերում է պետական հաստա-տություններին: Եվ վերջապես չորրորդը՝ պատմա-կան անցյալի բեռն է:

Հայաստանը դասվում է պլանային տնտեսությունից շուկայականին անցնող երկրների թվին: Դա նշանակում է, որ համեմատաբար կարճ ժամանակահատվածում երկիրը մի փուլից մյուսին պետք է անցնի:

Իսկ այդ ժամանակահատվածն այնքանով է կարճ, որքանով համաշխարհային տնտեսությունը թևակոխել է մի նոր փուլ, որ կոչվում է գլոբալիզացիա: Ամենապարզ ձևով «գլոբալիզացիա» երևույթը կարելի է բացատրել հետևյալ կերպ. տարաբնույթ հաղորդակցության միջոցների առաջընթացը նոր խնդիրներ է առաջ բերում, բայց միաժամանակ նոր, զարմանալի հնարավորություններ ընձեռում:

*(շարունակությունը 2-րդ էջում)*

*Միշել Լըգրան ծնվել է 1946 թվականին, Ֆրանսիայում:*

*1975թ.-ից աշխատում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունում: Աշխատել է Չինաստանում, Հունգարիայում, Հոնգ Քոնգում, նախկին Խորհրդային Միությունում, Ավստրալիայում և Հայաստանում:*

*1980-ական թթ ստանձնել է նախկին Խորհրդային Միության բաժնի վարիչի պաշտոն Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության ներքո:*

*Նախքան Հայաստանի դեսպան նշանակվելը Հայաստանում (հուլիս 1996թ.), Միշել Լըգրան Ֆրանսիայի մշտական ներկայացուցիչի տեղակալն էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունում:*

*Ամուսնացած է, ունի երեք երեխա:*

Չափազանց կարևոր է մեր երկու երկրների համար ըմբռնել, որ խոսքը ոչ թե վնասակար գաղափարախոսության մասին է, որի դեմ հարկ է պայքարել, այլ իրողության, որի դեմ հանդիման կանգնած են բոլոր պետությունները, ինչպիսին էլ լինի նրանց զարգացման մակարդակը:

Այդ փոփոխությունը կոնկրետ հետևանքներ ունի: Վերացական է հնչում, երբ փորձում ես տեսականորեն ցույց տալ, որ խորհրդային շրջանից ժառանգած կառուցվածքները պետք է փոփոխության ենթարկվեն՝ նոր պայմաններին համապատասխանելու նպատակով: Դարձյալ տեսական հարթության մեջ ենք մնում, երբ ասում ենք, թե դրա շնորհիվ Հայաստանը կարող է մուտք գործել համաշխարհային տնտեսություն: Իրականում ի՞նչ է դա նշանակում. ամենօրյա կյանքում դա նշանակում է խոր փոփոխություններ: Տեսական բացատրությունները պետք է ներդաշնակեցնել իրականության հետ, քանի որ մարդիկ հայտնվում են իրենց համար լիովին նոր իրավիճակում: Բերեմ համեմատաբար պարզ մի օրինակ. պետությունը, ինչպես նաև ընտանիքը տնականորեն չի կարող ծախսել ավելի, քան վաստակում է: Ուրեմն հարկավոր է համապատասխան բյուջե կազմել, բյուջե, որտեղ ծախսերը պիտի նվազեցվեն, փորձելով ավելացնել եկամուտները: Այս խնդիրը ծագում է ինչպես անհատների, այնպես էլ կառավարությունների առջև: Այս պարագայում ձեռնարկված միջոցները չեն կարող ժողովրդականություն վայելել: Կառավարություններից որոշակի արիություն է պահանջվում՝ ոչ-ժողովրդական միջոցառումներ կիրառելու համար:

**Պետք է կարողանալ դիմակայել գնալով ավելի անխնա դարձող միջազգային մրցակցությունը:**

Ֆրանսիան պատկանում է տնտեսապես զարգացած փոքրաթիվ երկրների շարքին: Եվ սակայն նա նույնպես պետք է հարմարվի նոր պայմաններին: Այն ժառանգել է պետականության շատ հզոր ավանդույթներ, որ հարկ է փոփոխության ենթարկել, եթե մենք՝ ֆրանսիացիներս, ցանկանում ենք համընթաց հետևել համաշխարհային զարգացմանը: Սա դյուրին չէ. Ֆրանսիայի քաղաքացիները սովորաբար մեծ ակնկալիքներ ունեն իրենց կառավարությունից: Եթե դուք Ֆրանսիա գնաք, հաճախ կարող եք լսել մարդկանցից, որ կյանքը ավելի բարվոք կլիներ, եթե աշխատավարձերն ավելի բարձր լինեին, հարկերն՝ ավելի ցածր, եթե սոցիալական ապահովության համակարգը ժողկրթության համակարգի հետ միասին ավելի լավը լինեին, եթե թոշակներն ավելի մեծ լինեին, իսկ աշխատաժամանակը՝ պակաս: Էլ չեմ խոսում բնակվարձերի, կամ գազի, ջրի և էլկտրականության գների մասին: Կա՞ մեկը, որ համաձայն չլինի նման ցանկությունների հետ: Սակայն դժբախտությունն այն է, որ հարկավոր է այդ ամենը ֆինանսավորել: Եվ այստեղ է, որ սկսվում են դժվարությունները: Միջազգային տնտեսական բարդ համատեքստում երկրների ղեկավարների խնդիրը, ինչպես քիչ առաջ ասացի, հեշտ չէ: Հարկավոր է վստահություն ներշնչել, որպեսզի մեր ազգային դրամը փնտրված լինի, որպեսզի ներդրողներն ուղղվեն դեպի մեր քաղաքներն ու մեր ձեռնարկությունները:

Մի խոսքով, պետք է կարողանալ դիմակայել գնալով ավելի անխնա դարձող միջազգային մրցակցությունը: Ոչ մի ներդրող չի գա Ֆրանսիա, եթե դուք նրան չապացուցեք, որ Ֆրանսիայում ներդնելն իր համար շահավետ է: Նույնը նաև Հայաստանի պարագայում: Այս իրողությունը, որի առջև կանգնած են պետությունները, վերաբերում է նաև ձեռնարկություններին: Մի օրինակ բերեմ ներկա տնտեսական իրականությունից: Ասիական ներկա ճգնաժամի հիմնական պատճառը մասնավոր ձեռնարկությունների և խոշոր կոնցեռնների պարտքերն են: Ֆինանսական կառույցները չկարողացան ֆինանսական և տնտեսական ոլորտների զագացմանը՝ համընթաց գնալ: Դրանք թույլ տվեցին, որ պարտքերն աճեն, մինչև մի գեղեցիկ օր դրանց մակարդակը անհանդուրժելի դարձավ ֆինանսական շուկաների համար: Այդ վիճակը երկար ժամանակ եղել էր տարածաշրջանի զարգացման և բարգավաճման հզոր շարժիչ ուժը: Սակայն այսօր վրա է հասել ուղղումներ կատարելու ժամանակը, և ինչքան դրանք ուշանան, այնքան դժվար կլինի: Եվ սակայն ասիական որոշ երկրներ կարողացան խույս տալ ճգնաժամից: Բերեմ Թայվանի օրինակը, որը կարողացավ որոշ չափով խուսափել այս ճգնաժամից, քանի որ ժամանակին համապատասխան միջոցներ էր ձեռնարկել: Ասիական ֆինանսական այս ճգնաժամը վիթխարի սոցիալական և մարդկային հետևանքներ է առաջացրել: Իսկ ո՞րն է Թայվանի հաջողության գաղտնիքը: Այն, որ նա սնանկացման մասին օրենք ունի: Պարադոքսալ է թվում, սակայն Թայվանի ձեռնարկությունները ասպարեզից դուրս չգալու համար հարկադրված են եղել մշտապես արդիականանալու: Դա զարգացման հզոր շարժիչ ուժ է եղել: Այսօր Թայվանը մեծ օգուտներ է քաղում տնտեսության համաշխարհայնացումից (գլոբալիզացիա)՝ շեշտը դնելով մրցակցության երկարաժամկետ երկու գործոնի վրա. մի կողմից՝ գիտական հետազոտություններ և զարգացում, մյուս կողմից՝ կրթություն:

Այստեղ դարձյալ վերադառնում եմ իմ թեմային՝ Ֆրանսիան և Հայաստանը: Մեր երկու երկրներն էլ կարիք ունեն մեծ ներդրումների՝ գիտահետազոտության, զարգացման ծրագրերում, ինչպես նաև կրթության բնագավառում: Մեր ժողովուրդների կրթական բարձր մակարդակի շնորհիվ մենք ի վիճակի կլինենք պատասխանել արդի մարտահրավերներին: Ո՛չ Ֆրանսիան, ո՛չ էլ Հայաստանը բնական հարստություններ չունեն: Հետևաբար մարդկային գործոնն է, որ պիտի ապահովի նրանց ապագա բարգավաճումը: Սրանից հանգում եմ հետևյալ համեմատաբար պարզ հետևությանը՝ չի կարելի վերացարկվել մեզ շրջապատող աշխարհից: Չի կարելի ինքնուրույն զարգացման ռազմավարություն մշակել՝ առանց հաշվի առնելու արտաքին գործոնները: Այն պետությունը, որն այդպիսի ռազմավարություն կմշակի, ստիպված կլինի ֆինանսավորել

իր տնտեսության բազմաթիվ ճյուղեր: Իսկ դա վնաս կհասցնի նրա տնտեսության դինամիկ ճյուղերին: Այդ երկրից ներդրողները երես կդարձնեն, և ի վերջո հենց սպառողները դա կմերժեն: Ի՞նչ եք կարծում՝ մի՞թե նրանք երկար կհանդուրժեն ապրանքների համար բարձր վճարել միայն հանուն այն բանի, որ դրանք տեղական արտադրության են: Իհարկե՝ ոչ:

Խոր տնտեսական փոփոխություններ ապրող միջավայրին հարմարվելը մեզ ի վերջո մղում է արտաքին աշխարհի մեր պատկերացման արմատական վերանայման. այդ աշխարհը միաժամանակ մրցակից է և գործընկեր, այն մեզ վրա պարտավորություններ է դնում, սակայն միաժամանակ մեր առջև բացում է մեր գոյության համար անհրաժեշտ նոր հնարավորություններ:

Այժմ անցնեմ երկրորդ կետին, որը վերաբերում է մշակութային ինքնությանը: Ֆրանսիացիներն ու հայերը իրենց լեզվամշակութային ինքնության շատ խորը զգացողություն ունեն: Եթե Փարիզ գնաք, ապա հաճախ կլսեք դժգոհություն, թե իբր ֆրանսիական մշակույթի էությունը հանդիսացող կանոնները ոտնձգությունների են ենթարկվում: Որքան հասկացել եմ, հայերի՝ իրենց մշակույթին պատկանելու զգացողությունը սերտորեն միահյուսվում է հայ առաքելական եկեղեցու հետ: Այսինքն, այն մոտեցումը, որ ի վերջո ունեն հայերն իրենց ազգային ինքնության վերաբերյալ, այնքան էլ հեռու չէ ֆրանսիացիների տեսակետներից:

Այս դեպքում էլ ես բավականին պարզ հետևություն պիտի անեմ. երբեք չպետք է մոռանալ, որ մշակույթը, ինչպես ցանկացած կենդանի օրգանիզմ, թարմանալու կարիք ունի, այն պետք է պայքարի կարծրացման դեմ կարճ ասած այն պետք է յուրացնի օտար մշակութային արժեքները և իր հանճարի ուժով դրանք իրենը դարձնի:

Այն ժողովուրդը, որ պարփակվում է իր ավանդույթներով, սովորույթներով, ծերացող ու մեռնող ժողովուրդ է: Կամ էլ նա չի կարող համաշխարհային հանրությանը ինտեգրվելու հավակնություն ունենալ: Խնդրում եմ ինձ լավ հասկանալ. ես չեմ փորձում փառաբանել համահարթող, միատարր մի մշակույթ, որ հիմնվում է մարդկության ամենապարզ արժեքների վրա: Ես նաև որևէ մշակույթի թշնամին չեմ: Ընդհակառակը, ես բազմաբնույթ մշակույթի ջերմեռանդ ջատագովն եմ, քանի որ կարծում եմ, որ այն նպաստում է համաշխարհային մշակութային ժառանգության հարստացմանը: Այդ իսկ պատճառով ես մեծ գոհունակություն եմ ապրում, երբ տեսնում եմ, որ ֆրանսիացի և հայ արվեստագետները որոնումների մեջ են, հրաժարվում են կանխակալ կարծիքներից, նոր, ինքնատիպ արտահայտչամիջոցներ են փնտրում, անվարան ներշնչվում են օտար արվեստագետների ստեղծագործություններից: Ես հիանում եմ, քանզի այդ որոնումներն ու պոռթկումներն ինձ համար խորհրդանշում են տվյալ մշակույթի կենսունակությունն ու դինամիզմը: Երբ խոսքը վերաբերում է մշակույթին կամ ցանկացած այլ բնագավառի, չարժե ողբալ ծանր ժամանակներում ապրելու կամ նոր կենսապայմանների ագրեսիվության համար: Պետք է ընդունել մարտահրավերը: Այսօր հաճախ ֆրանսիական հասարակության մեջ քննարկման առարկա է դառնում այն հարցը, թե արդյո՞ք Ինտերնետը վտանգավոր է մեր մշակույթի, հաղորդակցության միջոցների մեր, պատկերացումների համար: Արդյո՞ք ինֆորմացիայի տարածման արագությունը, որին ականատես ենք այսօր առաջ է բերում մարդու վերլուծելու և դատելու ունակությունների նվազեցում: Տարաբնույթ և տարբեր կարեվորության նորությունների հեղեղը արդյո՞ք սպառնում է մեզ ապակողմնորոշել: Ես պատրաստի պատասխաններ չունեմ: Սակայն գիտեմ, որ մեծագույն սխալ կլինի հրաժարվել նորամուծություններից, սոսկ այն պատճառով, որ դրանք խանգարում են մեր սովորույթներին:

Ֆրանսիացիներն ու հայերը, որոնք հաճախ այս ասպարեզներում միանման մոտեցումներ ունեն, պետք է միասին խորհեն այս երևույթների շուրջ, որովհետև դրանք հեղաշրջում են մեր կյանքը, և մենք չենք կարող անտարբեր մնալ դրանց նկատմամբ:

Երբեմն մենք մոռանում ենք, որ որևէ ազգի ինքնությունը անփոփոխ չէ: Այդ ինքնությունը դինամիկ երևույթ է, հարափոփոխ մի կառույց, այն մշտական գործընթաց է, որը միաժամանակ ներառում է ժողովրդի անցյալը, նրա ներկա ձգտումները և նրա ապագայի հեռանկարները: Ովքեր պարփակվում են իրենց ազգային ինքնությամբ, դրանով այն չեն պահպանում: Այսօրվա միակ մեջբերումը պիտի անեմ, մի քիչ այն փոփոխելով. Պոլ Վալերիի խոսքն է՝ «Քաղաքակրթություններ, հիշեցեք, որ մահկանացու եք»: Մեր ժողովուրդների հանճարը մշտապես ներշնչվել է օտար արժեքներից՝ դրանց հիման վրա ինքնատիպ գործեր ստեղծելով: Ավելի, քան երբևէ, այսօր այդպես պետք է վարվել: Արտաքին աշխարհի հետ առնչությունները մշակութային հարստացման աղբյուր են:

> Այն ժողովուրդը, որ պարփակվում է իր ավանդույթներով, ծերացող ու մեռնող ժողովուրդ է:

Այժմ անցնեմ ելույթիս երրորդ կետին, այն է՝ պետական հաստատությունների խնդիրը: Աստեղ էլ մենք ընդհանրություններ ունենք, այն էլ մեծ: Պետական հաստատությունների խնդիրը ներկայումս լայնորեն քննարկվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ Ֆրանսիայում: Արդի դեպքերը դրան լրացուցիչ հետաքրքրություն են հաղորդում: Ո՞րն է հարցը:

Ֆրանսիան, ինչպե՞ս և Հայաստանը, ընտրել են այնպիսի քաղաքական մոդել, որը հենվում է երկգլուխ իշխանության վրա: Ֆրանսիայի, ինչպես և Հայաստանի Սահմանադրությունը սահմանում է մեր երկրներում հանրապետության նախագահի և վարչապետի իրավունքներն ու պարտականությունները: Սակայն այդ Սահմանադրությունը համարյա ոչինչ չի ասում, թե ինչպես պետք է

վարվել, երբ իշխանության այս երկու ճյուղերի միջև ակնհայտ քաղաքական տարաձայնություն է առաջանում: Երևի այն պարզ պատճառով, որ Սահմանադրության հիմնադիրները ելել են այն սկզբունքից, որ նախագահի և վարչապետի միջև տարաձայնությունը բացառվում է: Եվ սակայն, մենք բոլորս էլ տեսնում ենք, որ հակասություն կա: Ֆրանսիայում այդ հակասությունը անվանվել է համակեցություն: Վստահ չեմ, թե այդ արտահայտությունն արդեն մուտք գործած լինի հայերի մտածելակերպի մեջ:

Բայց խոստովանենք, որ Ֆրանսիայում էլ գաղափարը շատ հին չէ:

Սակայն իրականում /այստեղ իմ խորապես լավատես էությունն է խոսում/ կարծում եմ, որ մեր Սահմանադրությունների հեղինակներն իրենցից անկախ հարգանքի տուրք են մատուցել մեր ժողովուրդների հասունությանը՝ նրանց վստահելով լավագույնս կարգավորել իշխանության երկու ճյուղերի միջև ծագած հակասությունները:

Մենք՝ ֆրանսիացիներն ու հայերը, միևնույն ժամանակ ուժեղ կենտրոնական իշխանության ժառանգորդներ ենք, որտեղ պետությունը մեծ դեր է խաղում սովորական քաղաքացու կյանքում: Աշխարհում այլ պետություններ կան, որոնց մոտեցումներն արմատապես տարբերվում են մեր սկզբունքներից, սակայն դա նրանց չի խանգարում ժողովրդավարական լինել: Ուզում եմ ասել, որ չպետք է կաշկանդվել գոյություն ունեցող սխեմաներով, և հարկ է նորամուծությունների գնալ, երբ դա անհրաժեշտ է:

**Իշխանությունը պատկանում է ժողովրդին**

Եվս մի հարց, որ կուզենայի նշել: Մասնակցությունը քաղաքական կյանքին ժողովրդավարության հիմնական պայմաններից մեկն է: Քաղաքացիների անտարբերությունը քաղաքական կյանքին այն վատթարագույն կեցվածքն է, որից օգտվում են տարաբնույթ դեմագոգներն ու ծայրահեղականները: Այս վտանգի դեմ պայքարելու միակ միջոցը քաղաքական ակտիվությունն է: Պետք է մշտապես հիշել մեր Սահմանադրությունների 2-րդ հոդվածը, ըստ որի «Իշխանությունը պատկանում է ժողովրդին»:

Վերջին կետը, որի վրա ուզում եմ կանգ առնել, պատմական անցյալն է և նրա բեռը՝ ֆրանսիացիներիս և հայերի ուսերին: Մենք պատկանում ենք այն ժողովուրդների թվին, ովքեր վիթխարի տեղ են հատկացնում պատմական անցյալին: Ֆրանսիայից բացի մի այլ երկիր կա՞ արդյոք, որտեղ ամեն տարի մշակույթի նախարարության հովանու ներքո հրատարակվի 230 էջանոց գրքույկ՝ նվիրված տվյալ տարվա «ազգային տոնակատարություններին»: Այս տարի լույս տեսած գրքում տեղ են գտել Սիտոյի օրդենի հիմնադրումը /1098/, 1958 թվականին 5-րդ հանրապետության հռչակումը, ինչպես նաև Սենտ Շապել մատուռի շինարարության ավարտը /1248/, Նանտի էդիկտի հրապարակումը /1598/, Վեստֆալիայի պայմանագրի կնքումը /1698/, Շատոբրիանի մահը /1848/, Զոլայի «Մեղադրում եմ» հոդվածի հրապարակումը /1898/ և այս նույն տարում Ֆրանսիայի ատրոակումբի ստեղծումը: Քավ լիցի, չեմ ծաղրում այս ազնիվ ավանդույթը: Այն ինձ իսկապես հուզում է: Եվ այնուամենայնիվ չեմ կարծում, թե դա անպայմանորեն օգնում է դիմակայելու ապագան: Անտարակույս անցյալի փորձն անգնահատելի է, պատմական հիշողությունը՝ շատ կարևոր: Կրոնական հանդուրժողականության փառաբանումը և զայրույթը՝ անարդարության նկատմամբ մշտապես արդիական են: Սակայն դա՛ չէ ինձ մտահոգում: Երիտասարդ սերունդը պետք է առաջ նայի: Այդ սերունդն է կառուցելու վաղվա աշխարհը, նա է ընդունելու նոր մարտահրավերները, և դա անելու է՝ հենվելով անցյալի փորձի վրա, առանց դրա գերին դառնալու: Հարցը պարզապես հավասարակշռությունը պահպանելու մեջ է: Կուզենայի պարզապես, որ երբեմն-երբեմն հետազոտություն հրապարակվեր պատմական անցյալի շարունակության վերաբերյալ: Պատմությանը հավատարիմ ենք, եթե նրա դասերը պտուղ են տալիս ներկայում:

Ելույթս, որտեղ փորձեցի համեմատություններ կատարել Ֆրանսիայի և Հայաստանի միջև՝ տեսնելու համար, թե ինչպե՞ս են նրանք հարմարվում ժամանակակից աշխարհին, իհարկե ընդհանուր գծերով էր ներկայացված: Իմ կարծիքով այն ցույց տվեց, թե ինչ խնդիրների առաջ ենք կանգնած և թե ինչպիսի դժվարություններ պետք է հաղթահարեն մեր երկու երկրները, որպեսզի ներգրավվեն արդի համաշխարհային գործընթացների մեջ: Թե ինչպե՞ս կկարողանանք ընդունել այդ մարտահրավերները, դրանից ի վերջո կախված կլինի մեր ապագան: Կկարողանա՞նք ներգրավվել փոխանակությունների և գաղափարների առճակատման լայն ասպարեզում: Կլինե՞նք այդ գործընթացների ակտիվ մասնակիցը: Այս հարցերի պատասխանն անհերքելիորեն դրական պետք է լինի, հակառակ դեպքում Ֆրանսիան և Հայաստանը կարող են համաշխարհային գործընթացներից դուրս մղվել: Անձամբ ես վստահ եմ, որ մենք ի վիճակի ենք հաղթահարել դժվարությունները:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*-Ինչպե՞ս եք գնահատում ֆրանս-հայկական բարեկամության և համագործակցության չօգտագործված ներուժը և ինչպիսի՞ն են Ֆրանսիայի ծրագրերը՝ այդ հնարավորությունները կյանքի կոչելու հարցում:*

-- Սկզբում ասացի, որ «բարեկամություն» բառը չեմ օգտագործելու, սակայն կօգտագործեմ այն ձեր հարցից ելնելով: Կարծում եմ, Ֆրանսիայի և Հայաստանի միջև բարեկամությունը անժխտելի փաստ է: Եթե ամուր տնտեսական հարաբերություններ չունենանք, մեր բարեկամությունը չի շարունակվի: Ոչ թե այն պատճառով, որ ցանկություն չենք ունենա, այլ որովհետև անտարբեր կդառնանք մեկմեկու նկատմամբ, որովհետև մեր շահերն այլևս չեն համընկնի: Առայժմ տնտեսական առումով մենք սերտ կապեր ունենք: Սակայն իմ նպատակը դրանք զարգացնելն է: Իմ կարծիքով այսպես ես ծառայած կլինեմ այդ բարեկամությանը, որ շատ բարձր եմ գնահատում:

*-- Դուք նշեցիք կրթության դերը Ֆրանսիայի և Հայաստանի զարգացման գործում: Ֆրանսիացիները ի՞նչ ձևով կարող են կոնկրետ և արագ օգնություն բերել Հայաստանին այս բնագավառում: Կարելի է, օրինակ, մտածել զանազան կարճատև, կոնկրետ պահանջներից բխող ուսուցման ծրագրերի իրականացման մասին, ինչպես, օրինակ, Ֆրանսիական համալսարան, առևտրի դպրոց և այլն:*

-- Լավ հարց է, և դրան շատ համեստ կպատասխանեմ: Ֆրանսիայի օգնությանը՝ Հայաստանին, այո եմ ասում: Բայց նախևառաջ, ինչպես ելույթումս նշեցի, երկու երկրները առանձնակի կարևորություն պիտի տան կրթության գործոնին: Չեմ ուզում չարախոսած լինել, սակայն Ֆրանսիայում յուրաքանչյուր նոր կրթության նախարար իր հետ բերում է նոր բարեփոխում: Դա ցույց է տալիս, որ մեր կրթության համակարգը լավ.վիճակում չէ: Ներողություն եմ խնդրում այն դասախոսներից, որ ներկա են դահլիճում, բայց ես վստահ չեմ, թե Ֆրանսիան կրթության բնագավառում Հայաստանի համար օրինակ կարող է ծառայել: Փոխարենը Ֆրանսիան կարող է և պետք է օգնություն ցույց տա հայ ուսանողներին և ուսումնական հաստատություններին: Ի՞նչ ձևով. կրթության հարցը շատ կարևոր է: Ոմանց նման իհարկե չեմ պնդի, թե ամեն ինչ միայն կրթությունից է կախված, քանի որ դա չափազանցություն կլինի, սակայն պետք է հստակ իմանալ, թե ինչ ես ուզում առաջարկել նոր սերնդին: Պետք է միաժամանակ զարգացնել համալսարանական մակարդակի ուսուցումը և գիտական հետազոտությունը, պետք է նաև մտածել պրոֆտեխնիկական ուսուցման մասին այն երիտասարդների համար, որոնք բարձրագույն կրթություն ստանալու հակում չունեն. սրանում որևէ ամոթալի բան չկա: Այսպիսով, լավագույն ծառայությունը, որ Ֆրանսիացիները կարող են մատուցել հայերին այն է, որ միասին քննարկեն, թե ինչպիսի՞ պատասխաններ կարելի է գտնել գոյություն ունեցող հարցերին: Եվ այդ յուրաքանչյուր կողմը պետք է անի իր միջոցներով, իր մշակութային առանձնահատկություններից և անցյալի փորձից ելնելով: Սա շատ լուրջ հարց է, միաժամանակ դժվար լուծելի:

*-- Ինչպիսի՞ հետևանքներ ունեցավ ասիական ճգնաժամը Ֆրանսիայի վրա:*

-- Վախենում եմ, որ դեռ հետևանքները գալիքում են: Ներկա հետևանքներից, եթե հիշողությունս չի դավաճանում, առայժմ մի «Դեռ» գործարան է փակվել, մի շարք կորեական ձեռնարկություններ հետաձգել են իրենց ներդրումները: Սրանք ամենատեսանելի և անմիջական հետևանքներն են: Երկրորդ տիպի հետևանքները, որոնք հստակ ներկայացնելը շատ դժվար է, Ֆրանսիական ձեռնարկությունների և բանկերի ֆինանսական պարտավորություններն են Ասիայում, մասնավորապես Ինդոնեզիայում: Հասկանալի է, որ ճգնաժամից տուժած ձեռնարկությունները չեն շտապելու այդ մասին, չեն հայտարարելու իրենց ֆինանսական կորուստների մասին: Դրանից ոչ նրանց վարկը կբարձրանա, ոչ նրանց դիրքը՝ սակարանում: Ասիական ճգնաժամը շատ խորն է: Այն երբևէ պետք է ծագեր: Իրականում նրա հետևանքները միայն բացասական չեն լինի: Ֆրանսիայի վրա այդ ճգնաժամի հետևանքներից մեկը դուք տեսաք, այն մեզ բոլորիս է վերաբերում նավթի բարելի գնի նվազումն է /հիարկե հիմա այն մի քիչ բարձրացել է նորից/: Հեռավոր Արևելքի երկրների զարգացման հեռանկարները վերանայվել են և ավելի համեստ տեմպերով են բնութագրվում: Նվազեցվել են նաև նավթամթերքների նրանց սպառման ծավալները, որի հետևանքով որոշ ժամանակ Փարիզի սակարանում «էլֆ» և «Տոտալ» ֆիրմաների բաժնետոմսերի գինն ընկավ, քանի որ խոսքը գնում է նավթային երկու մեծ ձեռնարկությունների մասին: Կրկնում եմ. մենք դեռ պիտի սպասենք գալիք հետևանքներին: Ինդոնեզական ճգնաժամը դեռ կարգավորված չէ, և մենք դեռ պատկերացում չունենք երևույթի իրական չափերի մասին:

*-- Հայ-ֆրանսիական հարաբերություններում արդյոք կարելի՞ է դեպքեր դիտարկել, երբ Հայաստանը տեխնիկական կամ տեխնոլոգիական օգնություն ցուցաբերի Ֆրանսիային:*

-- Հարցին մոտենամ այլ կողմից: Ավելի ճիշտ, ուզում եմ պատասխանել մի հարցի, որ դուք ինձ չեք տվել, ես չեմ սիրում «օգնություն» և նման տիպի այլ բառեր, որովհետև դրանք ստեղծում են կախվածության մթնոլորտ և անորոշություն են պարունակում: Սակայն շատ իրական հնարավորություններ և հեռանկարներ կան ֆրանսիացիների և հայերի միջև տնտեսական գործընկերության առումով, մասնավորապես նոր տեխնոլոգիաների, գիտական հետազոտությունների բնագավառներում: Հայաստանի համասարաններում շատ բարձրորակ մասնագետներ կան, որոնց աշխատանքները, հայտնագործությունները կարող են օգտագործվել ֆրանսիացի գործընկերների կողմից, և այս ձևով վիճակը շրջվում է՝ Ֆրանսիայից դեպի Հայաստան գնալու փոխարեն գնում է Հայաստանից Ֆրանսիա: Հարցն այսպես պետք է դիտարկել. գոյություն ունի արգասավոր հարաբերությունների պոտենցիալ - հնարավորություն երկու երկրների միջև, և ոչ միայն օգնության բնագավառում: Ասենք, ես չեմ խրախուսում Ֆրանսիայի օգնությունը Հայաստանին: Ես կարծում եմ, Հայաստանն անկախ երկիր է, ամուր կանգնած իր ոտքերին: Օգնություն կարելի է ցույց տալ արտակարգ իրավիճակներում, սակայն մեր հարաբերությունները պետք է զարգանան գործընկերության և տնտեսական զարգացման ուղիով:

*-- Ո՞րն է Ֆրանսիայի պաշտոնական դիրքորոշումը ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման հարցում:*

-- Ֆրանսիայի պաշտոնական դիրքորոշումը Ղարաբաղի հարցում, ինչպես գիտեք, բոլորովին չի տարբերվում Միացյալ Նահանգների և առավել ևս Ռուսաստանի դիրքորոշումից: Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Ռուսաստանը Մինսկի խմբի համանախագահներն են, որի առաքելությունը հակամարտության երեք կողմերի միջև խաղաղ կարգավորման լուծումներ գտնելն է: Համանախագահության առաքելությունը չի ենթադրում որևէ լուծման պարտադրում, այն միջնորդական է: Առաքելությունը հանդիպում է կողմերի հետ, ծանոթանում նրանց տեսակետներին, փորձում դրանք մերձեցնել, և, ի վերջո գտնել մի լուծում, որը գոհացնի բոլոր կողմերին:

Ֆրանսիայի պաշտոնական դիրքորոշումն այս հարցում հայտնի է: Այդ տեսակետը բաժանում են Եվրոպայի անվտանգության և համագործակցության

կազմակերպության անդամ 54 երկրներից 53-ը: Այստեղ որևէ գաղտնիք չկա:

*--Ինչո՞վ կբացատրեք Ֆրանսիայի արտաքին քաղաքականության զգալի տարբերություններն այլ արևմտյան երկրներից: Մասնավորապես նա կարծես թե միշտ հատուկ դիրքորոշում ունի մեր տարածաշրջանի կոնֆլիկտների վերաբերյալ:*

-- Որովհետև ձեզ շատ ենք սիրում, ահա թերևս անմիջական և անկեղծ պատասխանը: Երկրորդ, ավելի քաղաքական պատասխանը. նախ ես չեմ կարծում, որ մյուսները, ասենք Միացյալ Նահանգները, ձեզ պակաս են սիրում, քան մենք կամ որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը նվազ նպաստավոր է Հայաստանի համար, քան Ֆրանսիայինը: Վստահ չեմ: Չեմ կարծում, թե մեր երկու երկրների միջև տեսակետների տարբերություններ կան Հայաստանին ցուցաբերվող օգնության, աջակցության և բարեկամության առումով: Հիմա ուրեմն՝ ինչո՞ւ ենք մենք գուցե ավելի ուշադիր: Պատասխանն ակնհայտ է. ես չէի ուզում այս մասին խոսել այսօր, բայց դա բացատրվում է մեր ընդհանուր պատմությամբ, Ֆրանսիայում հայ համայնքի առկայությամբ, մարդիկ, որոնց նախնիները եկել են այս տարածաշրջանից, մեզ հայտնի դեպքերի արդյունքում: Դա ամուր կապեր է ստեղծել Ֆրանսիացիների և հայերի միջև և ես կարծում եմ սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ մեր իշխանությունները, նրա բարձրագույն օղակները, ի դեմս հանրապետության նախագահի, մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Հայաստանի, նրա մշակույթի, պատմության հանդեպ:

*-- Ինչպիսի՞ն է այսօր Ֆրանսիայի վերաբերմունքը Հայաստանի դեպքերին:*

-- Իրավիճակն այսպիսին է. դուք մարտի 16-ին ընտրելու եք հանրապետության նախագահին, իսկ մենք մարտի 15-ին գնալու ենք ռեգիոնալ խորհուրդների ընտրության: Երկուսս էլ ընտրարշավի մեջ ենք:

*-- Չե՞ք կարծում, որ Եվրոպան ավելի կրավորական կեցվածք ունի Հայաստանի և նրա զարգացման հարցում, քան Միացյալ Նահանգները:*

-- Վիճակագրական տվյալներն այլ բան են ասում: Հենց երեկ եմ նայել, թե ինչ գումարների օգնություն է Եվրամիությունը ցուցաբերում Հայաստանին: Համեմատելով ԱՄՆ օգնության հետ, դրանք համարժեք են: Ես մի քիչ դժվարանում եմ էքյուն դոլարի վերածելիս, բայց պիտի ասեմ, որ Եվրամիությունը և նրա անդամների սխալն այն է, որ նրանք չեն կարողանում հարկ եղածին պես գովազդել իրենց արածը: Գիտե՞ք, օրինակ, որ Պաղեստինում միջազգային օգնության հիմնական մասն ապահովվում է Եվրամիության կողմից: Սակայն այդ մասին ոչ մի թերթում չեք կարդա: Գուցե մենք հասարակական հարաբերությունների բնագավառում ենք թերանում: Երևի թե հարկ կա ցորենի պարկերի վրա մեծ տառերով գրել՝ «Նվիրատվություն Եվրամիության կողմից»: Մենք այդ շնորհքը չունենք: Բայց դա հասարակական հարաբերությունների հարց է: Ուզում եմ հավաստիացնել. Եվրոպան կրավորական կեցվածք չունի Հայաստանի նկատմամբ: Ասածիս վկայությունն է այն փաստը, որ Հայաստանի իշխանությունները ջանքեր են թափում՝ ՀՀ օրենսդրությունը Եվրամիության իրավական նորմերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Սա ցույց է տալիս, որ Հայաստանի ապագան ուղղված է Եվրոպային:

*-- Ձեր ելույթում նշեցիք, որ և՛ Ֆրանսիայի, և՛ Հայաստանի Սահմանադրություններում նշվում է, թե իշխանությունը պատկանում է ժողովրդին: Արդյոք դա ընդունելի՞ է նաև Ղարաբաղի ժողովրդի համար:*

-- Պատասխանս չափից դուրս դիվանագիտական կլինի՝ ես հավատարմագրված եմ Հայաստանի հանրապետությունում: Ես կարող եմ պատասխանել միայն ՀՀ-ին վերաբերող հարցերին:

## ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 12-ԻՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

## ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ

ներկայացնում է

## «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

Մարտի 12-ին, ժամը 17:30

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճ

Մուտքն ազատ է


## ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք»

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժին

URL://www.aua.am/aua/extens

Հայերեն տեղեկագրի համակարգող՝ Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58